ԵՎՐԱՍԻԱԿԱՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՄԻՈՒԹՅԱՆ ԴԱՏԱՐԱՆ

ԽՈՐՀՐԴԱՏՎԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

17 հունիսի 2026 թվականի քաղաք Մինսկ

Եվրասիական տնտեսական միության դատարանի մեծ կոլեգիան հետևյալ կազմով՝

նախագահող՝ դատարանի նախագահ Ա.Ա. Դրոնով,

զեկուցող դատավոր՝ Ա.Գ. Թունյան,

դատավորներ՝ Է.Վ. Հայրիյան, Դ.Պ. Ալեքսանդրով, Կ.Կ. Ջունուշպան, Ա.Ա. Զաբարա, Ե.Ժ. Իսմաիլով, Մ.Տ. Կայիպով, Ա.Բ. Կիշկեմբան, Ն.Վ. Պավլովա,

դատական նիստի քարտուղար՝ Գ.Վ. Սիմոնյան,

հետազոտելով գործի նյութերը, լսելով զեկուցող դատավորին,

ղեկավարվելով Եվրասիական տնտեսական միության դատարանի ստատուտի 2-րդ, 46-րդ, 47-րդ, 69-րդ, 73-րդ կետերով, Եվրասիական տնտեսական միության դատարանի կանոնակարգի 72-րդ, 85-րդ հոդվածներով,

տրամադրում է խորհրդատվական եզրակացություն՝ «Եվրասիական տնտեսական միության մասին» 2014 թվականի մայիսի 29-ի պայմանագրի առանձին դրույթների պարզաբանման մասին Ղազախստանի Հանրապետության՝ ի դեմս Ղազախստանի Հանրապետության մրցակցության պաշտպանության և զարգացման հարցերով գործակալության, դիմումի հիման վրա:

I. Դիմողի հարցը

Ղազախստանի Հանրապետությունը՝ ի դեմս Ղազախստանի Հանրապետության մրցակցության պաշտպանության և զարգացման հարցերով գործակալության (այսուհետ՝ դիմող, Գործակալություն), «Եվրասիական տնտեսական միության մասին» 2014 թվականի մայիսի 29-ի պայմանագրի (այսուհետ՝ Պայմանագիր) դրույթների պարզաբանման մասին դիմումով դիմել է Եվրասիական տնտեսական միության դատարան (այսուհետ՝ Դատարան):

Դիմողը նշում է, որ Ղազախստանի Հանրապետության խորհրդարանի Մաժիլիսի կողմից քննարկվում է «Ղազախստանի Հանրապետության որոշ օրենսդրական ակտերում մրցակցության հարցերի վերաբերյալ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» Ղազախստանի Հանրապետության օրենքի նախագիծը, որի շրջանակներում պատգամավորների կողմից նախաձեռնվել է «Բնական մենաշնորհների մասին» Ղազախստանի Հանրապետության 2018 թվականի դեկտեմբերի 27-ի օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի ուղղումը, որով նախատեսվում է նշված Օրենքի տեքստից հանել «մայրուղային» բառը:

Գործակալության կարծիքով՝ տվյալ ուղղումը ենթադրում է բնական մենաշնորհների ոլորտին դասել նավթի և (կամ) նավթամթերքի՝ բոլոր խողովակաշարերով, այլ ոչ թե միայն մայրուղային խողովակաշարերով տրանսպորտային փոխադրման ծառայությունները, ինչպես նախատեսված է Օրենքի գործող խմբագրությամբ:

Դիմողը նշում է, որ Պայմանագրի 78-րդ հոդվածի 7-րդ կետի համաձայն՝ անդամ պետություններում բնական մենաշնորհի ոլորտների ընդլայնումն իրականացվում է Եվրասիական տնտեսական հանձնաժողովի (այսուհետ՝ Հանձնաժողով) որոշմամբ այն դեպքում, երբ անդամ պետությունը համապատասխան կերպով Հանձնաժողով դիմելուց հետո մտադիր է բնական մենաշնորհի ոլորտին դասել բնական մենաշնորհի այլ ոլորտ, որը նշված չէ

Պայմանագրի թիվ 20 հավելվածում պարունակվող՝ «Բնական մենաշնորհի սուբյեկտների գործունեության կարգավորման միասնական սկզբունքների և կանոնների մասին» արձանագրության (այսուհետ՝ Արձանագրություն) թիվ 1 կամ թիվ 2 հավելվածում՝ այդ անդամ պետության կողմից Հանձնաժողով համապատասխան դիմում ներկայացվելուց հետո:

Դիմողը շարադրվածի կապակցությամբ խնդրում է պարզաբանել՝ արդյո՞ք Պայմանագրի նորմերի համաձայն վերոնշյալ ուղղման վերաբերյալ պահանջվում է Հանձնաժողովի կողմից որոշման ընդունում:

II. Ընթացակարգը Դատարանում

Եվրասիական տնտեսական միության դատարանի ստատուտի 68-րդ կետի համաձայն (Պայմանագրի թիվ 2 հավելված, այսուհետ՝ Ստատուտ)՝ պարզաբանման վերաբերյալ գործերի քննության կարգը սահմանվում է Եվրասիական տնտեսական բարձրագույն խորհրդի 2014 թվականի դեկտեմբերի 23-ի թիվ 101 որոշմամբ հաստատված՝ Եվրասիական տնտեսական միության դատարանի կանոնակարգով (այսուհետ՝ Կանոնակարգ):

Դատարանի մեծ կոլեգիայի 2026 թվականի մարտի 31-ի որոշմամբ՝ Ղազախստանի Հանրապետության մրցակցության պաշտպանության և զարգացման հարցերով գործակալության դիմումն ընդունվել է վարույթ:

Կանոնակարգի 75-րդ հոդվածով սահմանված կարգով Պարզաբանման վերաբերյալ գործը քննության նախապատրաստելու շրջանակներում հարցումներ են ուղարկվել և պատասխաններ են ստացվել Եվրասիական տնտեսական հանձնաժողովից, Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարությունից, Բելառուսի Հանրապետության հակամենաշնորհային կարգավորման և առևտրի նախարարությունից, Բելառուսի Հանրապետության տրանսպորտի և կապի նախարարությունից, Ռուսաստանի Դաշնության գլխավոր դատախազությունից, Բելառուսի պետական տեխնոլոգիական համալսարանից, Եվֆրոսինյա Պոլոցկայայի անվան Պոլոցկի պետական համալսարանի

մեխանիկատեխնոլոգիական ֆակուլտետից, Ղազախստանի Հանրապետության օրենսդրության և իրավական տեղեկատվության ինստիտուտից, Ռուսաստանի Դաշնության Կառավարությանն առընթեր օրենսդրության և համեմատական իրավագիտության ինստիտուտից, Օ.Ե. Կուտաֆինի անվան Մոսկվայի պետական իրավաբանական համալսարանից:

III. Դատարանի եզրահանգումները

1. Հաշվի առնելով դիմողի փաստարկները՝ սույն գործով պարզաբանման են ենթակա Պայմանագրի 78-րդ հոդվածի 7-րդ կետի, ինչպես նաև Արձանագրության 20-րդ կետի 1-ին ենթակետի դրույթները՝ դրանց համակարգային փոխկապակցվածության մեջ՝ անդամ պետություններում բնական մենաշնորհի ոլորտների ընդլայնման վերաբերյալ որոշումների ընդունման հարցում Հանձնաժողովի լիազորությունների իրացման համատեքստում: Ընդ որում, պարզաբանման են ենթակա ընթացակարգային բնույթի հարցերը, որոնք կապված չեն անդամ պետություններում բնական մենաշնորհի ոլորտների ընդլայնման վերաբերյալ որոշումների ընդունմանն ուղղված՝ Հանձնաժողովի գործունեության գնահատման հետ:

2. Ղեկավարվելով Ստատուտի 50-րդ կետով՝ Դատարանի մեծ կոլեգիան Պայմանագրի դրույթների պարզաբանում է իրականացնում դրանց միջև առկա համակարգային փոխադարձ կապի շրջանակներում՝ միջազգային իրավունքի համընդհանուր ճանաչում ունեցող սկզբունքների ու նորմերի և «Միջազգային պայմանագրերի իրավունքի մասին» 1969 թվականի մայիսի 23-ի Վիեննայի կոնվենցիայի 31-րդ հոդվածի դրույթների հիման վրա:

3. Պայմանագրի 1-ին հոդվածի 1-ին կետին համապատասխան՝ Եվրասիական տնտեսական միության (այսուհետ՝ Միություն) շրջանակներում ապահովվում են ապրանքների, ծառայությունների, կապիտալի և աշխատուժի տեղաշարժի ազատությունը, Պայմանագրով և Միության շրջանակներում կնքվող միջազգային պայմանագրերով սահմանված տնտեսության ճյուղերում

համակարգված, համաձայնեցված կամ միասնական քաղաքականության իրականացումը:

Պայմանագրի 3-րդ հոդվածի համաձայն՝ Միությունն իր գործունեությունն իրականացնում է անդամ պետությունների կողմից Պայմանագրին համապատասխան իրեն վերապահվող իրավասության շրջանակներում, մասնավորապես, Կողմերի փոխշահավետ համագործակցության, իրավահավասարության ապահովման և ազգային շահերը հաշվի առնելու սկզբունքների, շուկայական տնտեսության և բարեխիղճ մրցակցության սկզբունքների պահպանման հիման վրա:

Միության տարածքում մրցակցային միջավայրի ստեղծումն անհրաժեշտ նախապայման է ինտեգրացիոն գործընթացների շրջանակներում տնտեսական հարաբերությունների զարգացման և Պայմանագրի 4-րդ հոդվածում ամրագրված նպատակների իրագործման համար:

Պայմանագրի 3-րդ հոդվածին համապատասխան՝ շուկայական տնտեսության և բարեխիղճ մրցակցության սկզբունքների պահպանումը Միության գործունեության հիմնական սկզբունքներից է և Պայմանագրի օբյեկտի ու նպատակների արդյունավետ իրականացման պայման՝ ներառյալ Միության շրջանակներում ապրանքների, ծառայությունների, կապիտալի և աշխատուժի միասնական շուկայի ձևավորումը, համաշխարհային տնտեսության պայմաններում բազմակողմանի արդիականացումը, համագործակցությունը և ազգային տնտեսությունների մրցունակության բարձրացումը (Պայմանագրի 4-րդ հոդված):

Պայմանագրի 78-րդ հոդվածի 7-րդ կետի հիման վրա՝ Հանձնաժողովի կողմից անդամ պետություններում բնական մենաշնորհի ոլորտների ընդլայնման մասին որոշման ընդունումն օբյեկտիվորեն զուգորդվում է Միության շրջանակներում մրցակցության ընդհանուր սկզբունքների և կանոնների գործողության ոլորտի սահմանափակմամբ և (կամ) կիրառման ռեժիմի փոփոխմամբ, որոնք նախատեսված են Պայմանագրի XVIII բաժնում և «Մրցակցության ընդհանուր սկզբունքների և կանոնների մասին» արձանագրության մեջ (Պայմանագրի թիվ 19

հավելված):

Հաշվի առնելով շարադրվածը՝ Դատարանի մեծ կոլեգիան նշում է Պայմանագրի 78-րդ հոդվածի 7-րդ կետում ամրագրված նորմի կարևորությունը՝ բնական մենաշնորհի ոլորտների ընդլայնմանն ուղղված ներքին օրենսդրության ընդունման հարցում անդամ պետությունների հայեցողության (դիսկրեցիայի)՝ Պայմանագրին համապատասխանող սահմանների որոշման տեսանկյունից, ինչպես նաև վերոնշյալ նորմի փոխկապակցվածությունը Պայմանագրի 66-րդ հոդվածի 3-րդ կետի (ըստ որի՝ անդամ պետությունները ձգտում են հնարավորինս մեծ թվով ծառայությունների հատվածներում միասնական շուկայի ստեղծմանը և գործունեության ապահովմանը) և Պայմանագրի 78-րդ հոդվածի 6-րդ կետի դրույթների հետ (որը պարտավորեցնում է անդամ պետություններին ձգտել Արձանագրության թիվ 1 և թիվ 2 հավելվածներում նշված բնական մենաշնորհի ոլորտների ներդաշնակեցմանը՝ «դրանց կրճատման և սույն Պայմանագրի XX և XXI բաժիններում անցումային շրջանի հնարավոր սահմանման միջոցով»):

Անդամ պետությունները, շարադրվածի կապակցությամբ ստեղծելով բարենպաստ պայմաններ Միության կողմից իր գործառույթների կատարման համար, հաշվի են առնում բնական մենաշնորհի ոլորտում իրավական կարգավորման առանձնահատկությունները և տվյալ ոլորտում համաձայնեցված քաղաքականություն վարելու անհրաժեշտությունը:

4. Բնական մենաշնորհի սուբյեկտների գործունեության կարգավորման ոլորտում անդամ պետությունների փոխգործակցության հարցերն ամրագրված են Պայմանագրի XIX՝ «Բնական մենաշնորհը» բաժնում, ինչպես նաև Արձանագրության մեջ:

Արձանագրության 2-րդ կետի երրորդ պարբերության մեջ պարունակվող նորմ-սահմանման համաձայն՝ բնական մենաշնորհը ծառայությունների շուկայի վիճակ է, որի դեպքում ծառայությունների որոշակի տեսակի պահանջարկի բավարարման նպատակով մրցակցային պայմանների ստեղծումն անհնար է կամ տնտեսապես նպատակահարմար չէ՝ արտադրության տեխնոլոգիական

առանձնահատկությունների ու ծառայությունների տվյալ տեսակի մատուցման պատճառով:

Ինչպես նշել է Դատարանը՝ Ղրղզստանի Հանրապետության տրանսպորտի և ճանապարհների նախարարության դիմումի հիման վրա թիվ R-4/17 գործով 2017 թվականի նոյեմբերի 20-ի Խորհրդատվական եզրակացության 4-րդ կետում, վերոնշյալ նորմի իմաստից հետևում է, որ բնական մենաշնորհի էությունը դրա համապատասխանության մեջ է այնպիսի շուկայական իրավիճակին, երբ ցանկացած ծավալի արտադրանքի կամ ծառայության արդյունավետ արտադրությունն ու բաշխումը հնարավոր է միայն միակ արտադրողի առկայության դեպքում, իսկ արտադրության որոշակի մակարդակի դեպքում մեկ արտադրողի ծախսերի մեծությունն ավելի փոքր է, քան երկուսի կամ դրանից ավելիի դեպքում: Այս դեպքում մրցակիցների առկայությունը հանգեցնում է զուգահեռ ենթակառուցվածքի ստեղծման համար չարդարացված ծախսերի: Նման շուկայական իրավիճակը հնարավոր է միայն տեխնոլոգիայի առանձնահատկությունների, արտադրանքի և ռեսուրսների, մատուցվող ծառայությունների եզակիության և շուկա մուտք գործելու բարձր արգելքների արդյունքում:

5. Արձանագրության 3-րդ կետն ամրագրում է ընդհանուր սկզբունքները՝ այն հիմնարար սկզբունքները, որոնցով պետք է ղեկավարվեն անդամ պետությունները Արձանագրության թիվ 1 և թիվ 2 հավելվածներում նշված ոլորտներում բնական մենաշնորհի սուբյեկտների գործունեության կարգավորման և (կամ) հսկման ժամանակ, որոնց թվում են՝

կարգավորման արդյունավետության բարձրացում՝ ուղղված բնական մենաշնորհի ոլորտների հետագա կրճատմանն այդ ոլորտներում մրցակցության զարգացման պայմանների ստեղծման հաշվին.

կարգավորում սահմանելն այն դեպքերում, երբ համապատասխան ներքին շուկայի վերլուծության հիման վրա հաստատվում է, որ այդ շուկայում գործում է բնական մենաշնորհ:

Միության շրջանակներում կարգավորման վերոնշյալ սկզբունքները, որոնք առնչվում են քննվող գործի առարկային, ուղղված են տնտեսական գործունեության ոլորտում չարաշահումների կանխմանը, մրցակցային միջավայրի ապահովմանը, ինչպես նաև հիմք են՝ այս կամ այն ոլորտը որպես բնական մենաշնորհ իրավաբանորեն ամրագրելու համար:

6. Արձանագրության 2-րդ կետի տասներորդ պարբերության համաձայն՝ բնական մենաշնորհի ոլորտ ասելով հասկացվում է օրենսդրությամբ բնական մենաշնորհի շարքին դասված ծառայության շրջանառության ոլորտ, որում սպառողը կարող է օգտվել բնական մենաշնորհի սուբյեկտների ծառայություններից:

Ընդ որում, սպառողը քաղաքացիական իրավունքի սուբյեկտ է (ֆիզիկական կամ իրավաբանական անձ), որն օգտվում է կամ մտադիր է օգտվել բնական մենաշնորհի սուբյեկտների կողմից մատուցվող ծառայություններից. բնական մենաշնորհի սուբյեկտն անդամ պետությունների օրենսդրությամբ սահմանված բնական մենաշնորհի ոլորտներում ծառայություններ մատուցող տնտեսավարող սուբյեկտ է (Արձանագրության 2-րդ կետի ութերորդ և իններորդ պարբերություններ): Բնական մենաշնորհի սուբյեկտների այն ծառայությունների ցանկը, որոնք դասվում են բնական մենաշնորհի ոլորտներին, սահմանվում է անդամ պետությունների օրենսդրությամբ (Պայմանագրի 78-րդ հոդվածի 5-րդ կետ):

Բերված իրավական նորմերի իմաստից հետևում է, որ բնական մենաշնորհի սուբյեկտների գործունեության ոլորտն ընդգրկում է տնտեսության այն բնագավառները/հատվածները, որոնք ներառում են ֆիզիկական և իրավաբանական անձանց ծառայությունների մատուցման գործունեության տեսակներ: Տնտեսական գործունեության որոշակի տեսակի դասումը բնական մենաշնորհի ոլորտին, բնական մենաշնորհի սուբյեկտների ծառայությունների բովանդակությունը սահմանվում է համապատասխան անդամ պետության ազգային օրենսդրությամբ:

Վերազգային մակարդակով անդամ պետություններում բնական մենաշնորհի ոլորտները սահմանված են Արձանագրության թիվ 1 և թիվ 2 հավելվածներում՝

«Անդամ պետությունների բնական մենաշնորհի ոլորտները» միևնույն անվանման ներքո: Եթե Արձանագրության թիվ 1 հավելվածում նշված են անդամ պետությունների բնական մենաշնորհի այն ոլորտները, որոնք ազդեցություն են ունենում անդամ պետությունների միջև առևտրի վրա, և որոնց նկատմամբ կիրառվում են Պայմանագրի XIX՝ «Բնական մենաշնորհը» բաժնի դրույթները (Պայմանագրի 78-րդ հոդվածի 2-րդ կետ), ապա Արձանագրության թիվ 2 հավելվածում նշված են բնական մենաշնորհի այն ոլորտները, որոնց նկատմամբ կիրառվում են անդամ պետությունների համապատասխան օրենսդրության պահանջները (Պայմանագրի 78-րդ հոդվածի 4-րդ կետ):

7. Արձանագրության թիվ 1 հավելվածի 1-ին կետին համապատասխան՝ նավթի և նավթամթերքի տրանսպորտային փոխադրումը մայրուղային խողովակաշարերով նշված է որպես անդամ պետություններում բնական մենաշնորհի ոլորտներից մեկը, որոնք ազդեցություն են ունենում անդամ պետությունների միջև առևտրի վրա, և որի վրա տարածվում են Պայմանագրի XIX բաժնի դրույթները:

Միության անդամ պետությունների օրենսդրությամբ նավթի և նավթամթերքի տրանսպորտային փոխադրումը մայրուղային խողովակաշարերով ճանաչված է որպես բնական մենաշնորհի ոլորտ՝ բացառությամբ Հայաստանի Հանրապետության, որի ազգային օրենսդրությունը նման նորմ չի նախատեսում:

Այսպես, «Բնական մենաշնորհների մասին» Բելառուսի Հանրապետության 2002 թվականի դեկտեմբերի 16-ի թիվ 162-Z օրենքի (2019 թվականի նոյեմբերի 11-ի խմբագրությամբ) 3-րդ հոդվածի համաձայն՝ նավթի, նավթամթերքի տրանսպորտային փոխադրումը մայրուղային խողովակաշարերով դասվել է բնական մենաշնորհի ոլորտներին:

«Բնական մենաշնորհների մասին» Ղազախստանի Հանրապետության 2018 թվականի դեկտեմբերի 27-ի թիվ 204-VI օրենքի (2025 թվականի հուլիսի 29-ի խմբագրությամբ) 5-րդ հոդվածի 1-ին կետը սահմանում է, որ Ղազախստանի Հանրապետությունում բնական մենաշնորհի ոլորտին է դասվում մայրուղային խողովակաշարերով նավթի և (կամ) նավթամթերքի տրանսպորտային

փոխադրման կարգավորվող ծառայությունը՝ բացառությամբ Ղազախստանի Հանրապետության տարածքով տարանցման և Ղազախստանի Հանրապետության սահմաններից դուրս արտահանման նպատակով դրանց տրանսպորտային փոխադրման:

«Ղրղզստանի Հանրապետությունում բնական մենաշնորհների մասին» Ղրղզստանի Հանրապետության 2011 թվականի օգոստոսի 8-ի թիվ 149 օրենքի (2023 թվականի հուլիսի 25-ի խմբագրությամբ) 2-1 հոդվածում նավթի և նավթամթերքի տրանսպորտային փոխադրումը մայրուղային խողովակաշարերով ճանաչված է որպես բնական մենաշնորհի ոլորտ:

«Բնական մենաշնորհների մասին» Ռուսաստանի Դաշնության 1995 թվականի օգոստոսի 17-ի թիվ 147-FZ դաշնային օրենքով (2026 թվականի մարտի 23-ի խմբագրությամբ) նավթի և նավթամթերքի տրանսպորտային փոխադրումը մայրուղային խողովակաշարերով նույնպես դասված է բնական մենաշնորհի սուբյեկտների գործունեության ոլորտին:

8. Անկախ այն հանգամանքից, որ Արձանագրության թիվ 1 հավելվածի 1-ին կետում բնական մենաշնորհի ոլորտների նշման համար օգտագործվում է տարբեր եզրութաբանություն, մասնավորապես, Բելառուսի Հանրապետության, Ղրղզստանի Հանրապետության և Ռուսաստանի Դաշնության համար նշվում է «Նավթի և նավթամթերքի տրանսպորտային փոխադրում մայրուղային խողովակաշարերով», իսկ Ղազախստանի Հանրապետության համար՝ «Նավթի և (կամ) նավթամթերքի՝ մայրուղային խողովակաշարերով տրանսպորտային փոխադրման ծառայություններ», բոլոր դեպքերում խոսքը ծառայությունների շրջանառության ոլորտի մասին է՝ Արձանագրության 2-րդ կետի տասներորդ պարբերությամբ սահմանված «բնական մենաշնորհի ոլորտ» հասկացության իմաստով:

9. «Նավթի և նավթամթերքի ընդհանուր շուկաների կազմակերպման, կառավարման, գործունեության և զարգացման կարգի մասին» արձանագրության (Պայմանագրի թիվ 23 հավելված) 2-րդ կետի համաձայն՝ «նավթի և նավթամթերքի տրանսպորտային փոխադրումը» սահմանվում է որպես նավթի և նավթամթերքի

տեղափոխմանն ուղղված գործողությունների կատարում ցանկացած եղանակով, այդ թվում՝ խողովակաշարային տրանսպորտի օգտագործմամբ՝ ուղարկողից դրա ընդունման կետից մինչև ստացողին հանձնելու կետը՝ ներառյալ դատարկելը, լցնելը, այլ փոխադրամիջոցի վրա վերաբեռնելը, պահելը, խառնելը:

Բացի այդ՝ Միության շրջանակներում անդամ պետությունների կողմից Միության նավթի և նավթամթերքի ընդհանուր շուկաների ձևավորման ապահովման համար Եվրասիական տնտեսական բարձրագույն խորհրդի 2016 թվականի մայիսի 31-ի թիվ 8 որոշմամբ հաստատվել է Եվրասիական տնտեսական միության նավթի և նավթամթերքի ընդհանուր շուկաների ձևավորման հայեցակարգը, որտեղ տրված է «նավթի և նավթամթերքի տրանսպորտային փոխադրում» հասկացությունը, ինչը նշանակում է նավթի և նավթամթերքի տեղափոխմանն ուղղված գործողությունների կատարում ցանկացած եղանակով, այդ թվում՝ խողովակաշարային տրանսպորտի օգտագործմամբ՝ ուղարկողից դրա ընդունման կետից մինչև ստացողին հանձնելու կետը՝ ներառյալ դատարկելը, լցնելը, այլ փոխադրամիջոցի վրա վերաբեռնելը, պահելը, խառնելը. ինչպես նաև «նավթի և նավթամթերքի տրանսպորտային փոխադրման համակարգ» հասկացությունը՝ նավթի և (կամ) նավթամթերքի փոխադրման (վերամղման) համար օգտագործվող մայրուղային խողովակաշարերի և տրանսպորտի այլ տեսակների տրանսպորտային միջոցների ամբողջություն:

10. Նավթի և նավթամթերքի տրանսպորտային փոխադրումը որպես բնական մենաշնորհի ոլորտ կոնկրետացնելը տրանսպորտի հատուկ տեսակի՝ մայրուղային խողովակաշարի նշմամբ, արտացոլում է տվյալ տեսակի ապրանքների տրանսպորտային փոխադրման շուկայի յուրահատկությունը և Միության շրջանակներում այդ ոլորտում բնական մենաշնորհի ձևավորման պայմանները:

Չնայած այն հանգամանքին, որ Պայմանագրում բացակայում են «մայրուղային խողովակաշար» և «խողովակաշար» հասկացությունների սահմանումները, «մայրուղային խողովակաշար» հասկացությունը Միության իրավունքում բացահայտվում է տեխնիկական կանոնակարգերում, որոնք, Պայմանագրի 51-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի համաձայն, սահմանում են պարտադիր պահանջներ

արտադրանքի կամ արտադրանքի և դրա հետ կապված նախագծման (ներառյալ հետազննման), արտադրության, շինարարության, մոնտաժի, կարգաբերման, շահագործման, պահման, փոխադրման, իրացման և ուտիլիզացման գործընթացների նկատմամբ:

Մասնավորապես, Եվրասիական տնտեսական հանձնաժողովի խորհրդի 2020 թվականի դեկտեմբերի 23-ի թիվ 121 որոշմամբ ընդունված՝ «Հեղուկ և գազանման ածխաջրածինների տրանսպորտային փոխադրման համար նախատեսված մայրուղային խողովակաշարերին ներկայացվող պահանջների մասին» Եվրասիական տնտեսական միության տեխնիկական կանոնակարգը (այսուհետ՝ ԵԱՏՄ ՏԿ 049/2020) սահմանում է Միության մաքսային տարածքում կիրառման և կատարման համար պարտադիր պահանջներ հեղուկ և գազանման ածխաջրածինների տրանսպորտային փոխադրման համար նախատեսված մայրուղային խողովակաշարերի նկատմամբ՝ նախագծման (ներառյալ ինժեներական հետազննումները), շինարարության (վերակառուցման), շահագործման (ընդունման և շահագործման հանձնման, կոնսերվացման), ուտիլիզացման (լիկվիդացման) ժամանակ, ինչպես նաև դրանց համապատասխանության գնահատման կանոնները:

Համաձայն ԵԱՏՄ ՏԿ 049/2020-ի 2-րդ կետի՝ տվյալ տեխնիկական կանոնակարգի կարգավորման օբյեկտ են համարվում մայրուղային խողովակաշարերը՝ ներառյալ դրանց ճյուղավորումները, որոնք ունեն մինչև 1400 DN (ներառյալ) անվանական տրամագիծ, 1,2-ից մինչև 14 ՄՊա (ներառյալ) ավելցուկային ճնշում՝ հեղուկ ածխաջրածինների փոխադրման համար, և 1,2 ՄՊա-ից բարձր՝ մինչև 25 ՄՊա (ներառյալ) ավելցուկային ճնշում՝ գազանման ածխաջրածինների փոխադրման համար:

11. ԵԱՏՄ ՏԿ 049/2020-ի 5-րդ կետի տասնմեկերորդ պարբերության մեջ բացահայտվում է «մայրուղային խողովակաշար» հասկացությունը, որը նշանակում է միասնական արտադրատեխնոլոգիական համալիր, որը նախատեսված է հեղուկ կամ գազանման ածխաջրածիններն ընդունման կետից մինչև սպառողներին հանձնման կետ փոխադրելու կամ հեղուկ ածխաջրածիններն ավտոմոբիլային,

երկաթուղային կամ ջրային տրանսպորտի վրա փոխաբեռնելու համար, բաղկացած է կառուցվածքապես և տեխնոլոգիապես փոխկապակցված օբյեկտներից՝ ներառյալ մայրուղային խողովակաշարի օբյեկտների սպասարկման և կառավարման նպատակներով օգտագործվող կառույցներն ու շենքերը:

ԵԱՏՄ ՏԿ 049/2020-ը, սահմանելով պարտադիր պահանջներ մայրուղային խողովակաշարերի նկատմամբ, միաժամանակ սահմանում է այլ խողովակաշարերի շրջանակը, որոնց վրա տվյալ տեխնիկական կանոնակարգի պահանջները չեն տարածվում: Որպես այդպիսի խողովակաշարեր՝ ԵԱՏՄ ՏԿ 049/2020-ի 4-րդ կետում նշվում են գազաբաշխիչ և գազասպառման ցանցերի խողովակաշարերը, ինքնավար գազամատակարարման ցանցերի և ավտոգազալիցքավորման ճնշակայանների խողովակաշարերը, ծովային խողովակաշարերը, արդյունագործական և միջարդյունագործական խողովակաշարերը, թեթև ածխաջրածինների լայն թորամասի և հեղուկացված ածխաջրածնային գազերի փոխադրման խողովակաշարերը, ինչպես նաև ածխաջրածնային հումքի արդյունահանման և (կամ) վերամշակման տեխնոլոգիական գործընթացների իրականացման և ապահովման համար նախատեսված խողովակաշարերը:

Իր հերթին «խողովակաշար» հասկացությունը Միության իրավունքում բացահայտվում է Եվրասիական տնտեսական հանձնաժողովի խորհրդի 2013 թվականի հուլիսի 2-ի թիվ 41 որոշմամբ ընդունված՝ «Ավելցուկային ճնշման տակ աշխատող սարքավորումների անվտանգության մասին» Մաքսային միության տեխնիկական կանոնակարգի (այսուհետ՝ ՄՄ ՏԿ 032/2013 (2025 թվականի սեպտեմբերի 26-ի խմբագրությամբ)) 4-րդ կետում, և նշանակում է սարքավորում, որը նախատեսված է ավելցուկային ճնշման տակ տարբեր միջավայրերի փոխադրման համար, բաղկացած է չերկատվող և (կամ) քանդովի միացումների կիրառմամբ՝ միմյանց միացված խողովակաշարային արմատուրից, խողովակներից, կցաշուրթերից և խողովակաշարի այլ դետալներից ու տարրերից, ինչպես նաև խողովակաշարի անվտանգ աշխատանքն ապահովող՝ դրանց միացված հենարանային կախովի համակարգի դետալներից: Ընդ որում,

ՄՄ ՏԿ 032/2013-ը 3-րդ կետում սահմանում է, որ տեխնիկական կանոնակարգը չի տարածվում արտադրանքի այնպիսի տեսակների վրա, ինչպիսիք են մայրուղային խողովակաշարերը, ներքին արդյունագործական խողովակաշարերը և տեղական բաշխման խողովակաշարերը, որոնք նախատեսված են գազի, նավթի և այլ մթերքի տրանսպորտային փոխադրման համար՝ բացառությամբ ճնշման կարգավորման կայաններում կամ կոմպրեսորային կայաններում օգտագործվող սարքավորումների («ա» ենթակետ). շենքերի և շինությունների ջրային ջեռուցման համակարգերում ջեռուցման սարքերն ու խողովակաշարերը («ժը» ենթակետ). խողովակաշարերի հենարանային կախովի համակարգերը և դրանց տարրերը («ի» ենթակետ):

12. «Մայրուղային խողովակաշար» հասկացությունը բացահայտվում է նաև Բելառուսի Հանրապետության և Ղազախստանի Հանրապետության հատուկ օրենսդրական ակտերում, որոնք կարգավորում են հասարակական հարաբերությունները մայրուղային խողովակաշարերի բնագավառում (մյուս անդամ պետություններում նման ակտեր բացակայում են):

«Մայրուղային խողովակաշարային տրանսպորտի մասին» Բելառուսի Հանրապետության 2002 թվականի հունվարի 9-ի թիվ 87-Z օրենքի 1-ին հոդվածի (Բելառուսի Հանրապետության 2022 թվականի հուլիսի 12-ի օրենքի խմբագրությամբ) համաձայն՝ մայրուղային խողովակաշարը միասնական արտադրատեխնոլոգիական համալիր է, որը նախատեսված է արտադրանքն ընդունման կետից մինչև սպառողներին հանձնման կետ փոխադրելու կամ հեղուկ ածխաջրածիններն ավտոմոբիլային, երկաթուղային կամ ներքին ջրային տրանսպորտի վրա փոխաբեռնելու համար և բաղկացած է կառուցվածքապես և տեխնոլոգիապես փոխկապակցված օբյեկտներից՝ ներառյալ մայրուղային խողովակաշարի օբյեկտների սպասարկման և կառավարման նպատակներով օգտագործվող շենքերն ու կառույցները: Օրենքի գործողությունը չի տարածվում, մասնավորապես, արդյունագործական, տեխնոլոգիական, բաշխիչ խողովակաշարերի վրա (Օրենքի 2-րդ հոդվածի 2-րդ կետ):

«Մայրուղային խողովակաշարի մասին» Ղազախստանի Հանրապետության 2012 թվականի հունիսի 22-ի օրենքի 1-ին հոդվածի 5-րդ կետում (2025 թվականի հուլիսի 8-ի դրությամբ), որում մայրուղային խողովակաշար հասկացությունը սահմանված է որպես միասնական արտադրատեխնոլոգիական համալիր, որը բաղկացած է գծային մասից և օբյեկտներից, որոնք ապահովում են արտադրանքի անվտանգ տրանսպորտային փոխադրումը, որը համապատասխանում է տեխնիկական կանոնակարգերի և ազգային ստանդարտների պահանջներին:

Ընդ որում, Ղազախստանի Հանրապետության վերոնշյալ օրենքի 11-րդ հոդվածում սահմանված են մայրուղային խողովակաշարերի տեսակները, որոնց դասվում են մայրուղային նավթամուղները, գազամուղները և նավթամթերքատարները (1-ին կետ), ինչպես նաև թվարկված են այն խողովակաշարերը, որոնք չեն դասվում մայրուղային խողովակաշարերին (11-րդ հոդվածի 4-րդ կետ): Համաձայն օրենքի՝ մայրուղային խողովակաշարերին չեն դասվում արդյունագործական, տեխնոլոգիական և այլ խողովակաշարեր, ինչպես նաև բաշխիչ խողովակաշարերը:

13. Դատարանի մեծ կոլեգիան վերոշարադրյալի հիման վրա նշում է, որ «մայրուղային խողովակաշարը» խողովակաշարի տեսակ է, որը տվյալ դեպքում օգտագործվում է նավթի և (կամ) նավթամթերքի տրանսպորտային փոխադրման համար, մինչդեռ «խողովակաշար» եզրույթն ընդգրկում է ինչպես մայրուղային նավթամուղներն ու նավթամթերքատարները, այնպես էլ այլ խողովակաշարեր, որոնք չեն դասվում մայրուղայիններին: Հետևաբար, «մայրուղային» բառի հանումը «Բնական մենաշնորհների մասին» Ղազախստանի Հանրապետության 2018 թվականի դեկտեմբերի 27-ի օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի տեքստից, կընդլայնի Արձանագրության թիվ 1 հավելվածում սահմանված բնական մենաշնորհի ոլորտների ցանկը, քանի որ կներառի նաև այլ ոլորտ, որը կապված չէ նավթի և (կամ) նավթամթերքի տրանսպորտային փոխադրման հետ բացառապես մայրուղային խողովակաշարերով:

14. Պայմանագրի 78-րդ հոդվածի 7-րդ կետն անդամ պետություններում

բնական մենաշնորհի ոլորտների ընդլայնման հնարավորություն է ընձեռում: Նման ընդլայնումն իրականացվում է՝

անդամ պետությունների օրենսդրությանը համապատասխան, եթե անդամ պետությունը մտադիր է բնական մենաշնորհի ոլորտին դասել այն ոլորտը, որը մյուս անդամ պետությունում բնական մենաշնորհի ոլորտ է և նշված է Արձանագրության թիվ 1 կամ թիվ 2 հավելվածում.

Հանձնաժողովի որոշմամբ, եթե անդամ պետությունը համապատասխան կերպով Հանձնաժողով դիմելուց հետո մտադիր է բնական մենաշնորհի ոլորտին դասել բնական մենաշնորհի այլ ոլորտ, որը նշված չէ Արձանագրության թիվ 1 կամ թիվ 2 հավելվածում:

15. Պայմանագրի 78-րդ հոդվածի 7-րդ կետի նորմի տառացի ընթերցումը թույլ է տալիս եզրակացնել, որ դիմողի հարցին պատասխանելու համար անհրաժեշտ է պարզել երկու հանգամանք՝

1) արդյո՞ք «նավթի և (կամ) նավթամթերքի՝ մայրուղային խողովակաշարերով տրանսպորտային փոխադրման» ձևակերպումից «մայրուղային» բառի հանումը բնական մենաշնորհի ոլորտների ընդլայնում է.

2) արդյո՞ք Արձանագրության թիվ 1 կամ թիվ 2 հավելվածներում նշված է նավթի և (կամ) նավթամթերքի տրանսպորտային փոխադրումն այլ խողովակաշարերով, բացի մայրուղայիններից:

«Միջազգային պայմանագրերի իրավունքի մասին» 1969 թվականի մայիսի 23-ի Վիեննայի կոնվենցիայի 31-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ պայմանագիրը պետք է բարեխղճորեն մեկնաբանվի պայմանագրի եզրույթների՝ դրանց համատեքստում ունեցած սովորական նշանակությանը համապատասխան, ինչպես նաև պայմանագրի օբյեկտի և նպատակների լույսի ներքո:

Ըստ Ա.Պ. Եվգենևայի խմբագրությամբ ռուսաց լեզվի բառարանի (Փոքր ակադեմիական բառարան, հատոր 3, էջ 684)՝ «ընդլայնում» եզրույթի սովորական նշանակությունն է՝ «թվի, ծավալի մեծացում», «գործողության շրջանակի, ինչ-որ

բանի ընդգրկման մեծացում»: Անդամ պետությունների մարմինների և կազմակերպությունների՝ Դատարանի հարցումներին ուղղված պատասխաններում նշված է, որ «խողովակաշար» եզրույթն ընդգրկում է ինչպես մայրուղային խողովակաշարերը, այնպես էլ այլ խողովակաշարեր, որոնք չեն դասվում մայրուղայիններին: Այստեղից հետևում է, որ օրենքի ձևակերպումից «մայրուղային» ածականի հանումը մեծացնում է բնական մենաշնորհի ոլորտների քանակը՝ դրանց ավելացնելով նավթի և նավթամթերքի տրանսպորտային փոխադրումը բոլոր այլ խողովակաշարերով՝ բացի մայրուղայիններից, այսինքն՝ հանգեցնում է բնական մենաշնորհի ոլորտների ընդլայնման:

Նավթի և նավթամթերքի տրանսպորտային փոխադրումը մայրուղային խողովակաշարերով՝ Արձանագրության թիվ 1 հավելվածում ընդգրկված բնական մենաշնորհի ոլորտների ցանկում 1-ին համարի ներքո է: Արձանագրության թիվ 1 կամ թիվ 2 հավելվածների այլ կետերում նավթի և նավթամթերքի տրանսպորտային փոխադրում չի հանդիպում: Այսինքն՝ Պայմանագիրը սահմանափակում է բնական մենաշնորհի տվյալ ոլորտը բացառապես «մայրուղային խողովակաշարերով» տրանսպորտային փոխադրմամբ: Նավթի տրանսպորտային փոխադրումն այլ խողովակաշարերով Պայմանագրում նշված չէ:

16. Արձանագրության 20-րդ կետի 1-ին ենթակետին համապատասխան՝ Հանձնաժողովը որոշում է կայացնում անդամ պետություններում բնական մենաշնորհի ոլորտների ընդլայնման վերաբերյալ, եթե անդամ պետությունը, Հանձնաժողովին համապատասխան կերպով դիմելուց հետո, մտադիր է բնական մենաշնորհի ոլորտին դասել բնական մենաշնորհի այլ ոլորտ, որը նշված չէ Արձանագրության թիվ 1 և թիվ 2 հավելվածներում:

Պայմանագրով սահմանված՝ Արձանագրության թիվ 1 և թիվ 2 հավելվածներում նշված բնական մենաշնորհի ոլորտների ընդլայնման միջոցով պետությունների պարտավորությունների փոփոխման մեխանիզմը երաշխավորում է անդամ պետությունների ինքնիշխան հավասարության, փոխշահավետ համագործակցության ապահովման, իրավահավասարության և ազգային շահերը հաշվի առնելու սկզբունքների պահպանումը (Պայմանագրի 3-րդ հոդված):

Ընդ որում, Պայմանագիրը չի սահմանափակում անդամ պետության իրավունքը՝ բնական մենաշնորհի ոլորտին դասելու մի ոլորտ, որն արդեն իսկ ճանաչվել է այդպիսին մյուս անդամ պետությունում և ներկայացված է Արձանագրության թիվ 1 կամ թիվ 2 հավելվածում (Պայմանագրի 78-րդ հոդվածի 7-րդ կետի երկրորդ պարբերություն): Իսկ եթե բնական մենաշնորհի ոլորտը թիվ 1 կամ թիվ 2 հավելվածում բացակայում է, ապա նոր ոլորտը կոնկրետ պետությունում կարող է օրենսդրորեն դասվել բնական մենաշնորհի շարքին միայն անդամ պետության կողմից Հանձնաժողով համապատասխան դիմում ներկայացվելուց և Հանձնաժողովի կողմից տվյալ դիմումի հիման վրա տվյալ անդամ պետությունում բնական մենաշնորհի ոլորտների ընդլայնման մասին որոշում ընդունվելուց հետո:

Հանձնաժողովի կողմից պետությունների դիմումների քննարկումը և դրանց վերաբերյալ համապատասխան որոշումների ընդունումը՝ Պայմանագրի 78-րդ հոդվածի 7-րդ կետի երրորդ պարբերությամբ սահմանված կարգով, լիովին համապատասխանում է Հանձնաժողովի գործունեության նպատակին՝ իր իրավասությունների սահմաններում ապահովելու Միության շրջանակներում միջազգային պայմանագրերի իրացումը («Եվրասիական տնտեսական հանձնաժողովի մասին» հիմնադրույթի 4-րդ կետ, որը Պայմանագրի թիվ 1 հավելվածն է):

17. Եվրասիական տնտեսական բարձրագույն խորհրդի 2014 թվականի դեկտեմբերի 23-ի թիվ 98 որոշմամբ հաստատված՝ Եվրասիական տնտեսական հանձնաժողովի աշխատանքի կանոնակարգի թիվ 1 հավելվածի 73-րդ կետին համապատասխան՝ անդամ պետության դիմումի հիման վրա Արձանագրության թիվ 1 և թիվ 2 հավելվածներում չնշված ոլորտները բնական մենաշնորհի ոլորտին դասելու մասին որոշումների ընդունումը վերապահված է Եվրասիական տնտեսական հանձնաժողովի խորհրդի իրավասությանը:

Անդամ պետությունը, ղեկավարվելով Պայմանագրի 78-րդ հոդվածի 7-րդ կետով, Հանձնաժողով է ուղարկում բնական մենաշնորհների այլ ոլորտ (Արձանագրության թիվ 1 և թիվ 2 հավելվածներում չնշված) դասելու մտադրության մասին դիմումը և բնական մենաշնորհների ոլորտի ընդլայնման մտադրություններն ու պատճառները հիմնավորող նյութերը (պարզաբանումներ նման որոշման

ընդունման վերաբերյալ, վերլուծական աշխատանքի արդյունքներ և (կամ) պետական քաղաքականության վարման ընթացիկ իրավիճակի ուսումնասիրություն և այլն):

18. Այսպիսով, Միության անդամ պետություններում գոյություն ունեցող բնական մենաշնորհի ոլորտը՝ նավթի և նավթամթերքի տրանսպորտային փոխադրման առումով, սահմանափակված է դրանց տրանսպորտային փոխադրմամբ մայրուղային խողովակաշարերով, ինչը բխում է Արձանագրության թիվ 1 հավելվածից: Միության իրավունքի մակարդակով նմանատիպ տրանսպորտային փոխադրումը սահմանված է որպես սպեցիֆիկ օբյեկտ, որն ընդգրկվում է բնական մենաշնորհի ոլորտում անդամ պետություններից յուրաքանչյուրում՝ դրանց ներքին օրենսդրության պահանջների հիման վրա:

Վերոշարադրյալից հետևում է, որ մայրուղայինից բացի ցանկացած խողովակաշարով նավթի և (կամ) նավթամթերքի տրանսպորտային փոխադրման ծառայությունները անդամ պետության կողմից բնական մենաշնորհի ոլորտին դասելը կհամարվի բնական մենաշնորհների ոլորտի ընդլայնում՝ բնական մենաշնորհի այլ ոլորտի հաշվին, որը նշված չէ Արձանագրության թիվ 1 և թիվ 2 հավելվածներում, և, Պայմանագրի 78-րդ հոդվածի 7-րդ կետի երրորդ պարբերության համաձայն՝ կարող է իրականացվել միայն շահագրգիռ պետության կողմից Հանձնաժողով համապատասխան դիմում ներկայացվելուց և Հանձնաժողովի կողմից տվյալ հարցի վերաբերյալ դրական որոշում ընդունվելուց հետո:

19. Հիմնվելով շարադրվածի վրա՝ Դատարանի մեծ կոլեգիան ներկայացնում է հետևյալ պարզաբանումը՝

Պայմանագրի 78-րդ հոդվածի 7-րդ կետին համապատասխան բնական մենաշնորհի ոլորտների ընդլայնումը՝ դրանց շարքին դասելով որևէ այլ անդամ պետությունում բնական մենաշնորհի ոլորտ չհանդիսացող և Արձանագրության թիվ 1 և թիվ 2 հավելվածներում չնշված՝ մայրուղայինից բացի այլ տեսակի խողովակաշարերով նավթի և նավթամթերքի տրանսպորտային փոխադրումները,

հնարավոր է միայն անդամ պետության կողմից Եվրասիական տնտեսական հանձնաժողով համապատասխան դիմում ներկայացվելուց և Հանձնաժողովի կողմից տվյալ դիմումի հիման վրա տվյալ անդամ պետությունում բնական մենաշնորհի ոլորտների ընդլայնման մասին որոշում ընդունվելուց հետո:

IV. Եզրափակիչ դրույթներ

Սույն խորհրդատվական եզրակացության պատճենն ուղարկել դիմողին:

Խորհրդատվական եզրակացությունը տեղադրել Դատարանի պաշտոնական ինտերնետային կայքում:

Նախագահող՝ Ա.Ա. Դրոնով

Դատավորներ՝ Է.Վ. Հայրիյան

Դ.Պ. Ալեքսանդրով

Կ.Կ. Ջունուշպան

Ա.Ա. Զաբարա

Ե.Ժ. Իսմաիլով

Մ.Տ. Կայիպով

Ա.Բ. Կիշկեմբան

Ն.Վ. Պավլովա

Ա.Գ. Թունյան